

ԸՆԹԵՐՑՈՂԷՆ՝ ԱՌԻԽՄԱԳԻՐՆ

ԱՍՏՈՒԱՅՐԱՇՈՒՆՁԻ ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆ

Սրբազան Տէր Խմբագիր
«Սիոն» ամսաթերթի

Նուստաղիմ

Գերապատիւ Հայր,

Աստուածաշունչին աշխարհաբար հաշերէնով հրատարակուելուն, Տիար Ծարմանեանին յայտնած կարծիքը Սիոնի 1930, նոյեմբեր՝ թիւ 11ին մէջ, հաճոյքով կարգաւորվ, պարտք զգացի հետեւեալ իմ համեստ կարծիքս ալ հրապարակելու, այն յոյսով թէ ընդփոյթ հրատարակմանը սատարած պիտի ըլլամ, որուն կարիքը մանաւանդ ներկայիս մեծ անհրաժեշտութիւն մըն է:

Համակարծիք եմ Տիար Ծարմանեանին թէ այս հսկայ ձեռնարկը կարելի է յաջողորնել միմիայն համազգային նախաձեռնութեամբ. այսինքն ամէն հայ անհատէ նիւթական օժանդակութիւն մը ապահովելով:

Աւստի անհրաժեշտ է որ փութացուի կեղերական յանձնախումբ մը կազմելու նրուստաղէմի Պատրիարքարանին վերահսկողութեանը տակ և մասնաճիւղեր՝ բոլոր հայաշատ քաղաքներուն մէջ, Առաջնորդարաններու և կամ Բարեկրթականի հովանաւորութեամբ:

Իմ կարծիքով, հրատարակութիւնը պէտք է ըլլայ երկու տեսակ. Ա. ը միջակ տառերով լաթական և զիւրամատչելի գին որոշելով առ առաւելն մէկ ու կէս տոլար. իսկ Բ. ը խոշոր տառերով, ընտիր թուղթ, մեծածաւալ կաշեկազմ, որուն գինն ալ որոշել պիտեմէն հաւասարակշիւելու սակովմը:

Նոյնպէս հանգանակութիւնը պէտք է ըլլայ երկու տեսակ. մին՝ պարզ նուիրատուութիւն, իսկ Բ. ը պայմանագրութիւն. այսինքն նախ քան հրատարակութիւնը որոշուած սակին 10 կամ 20% զեղջով գընորդներէն փոխարժէքը կանխիկ գանձել:

Հուսկ ուրեմն, նիւթականը՝ ժողովուրդէն, իսկ բարոյական օժանդակութիւնն ալ տեղւոյց Սրբազան Հայրերէն սիրայօժար տրամադրուելուն անկասկած ըլլալով կը սիրեմ յուսալ թէ խօսքէն զործին լծուելու ժամը հասած է և որքան շուտ, այնքան լաւ:

Յարմարագոյն տալիքէն օգտուելով հաճեցէք ընդունիլ Սրբազան Հայր, խորին յարգանայն հաւատարմեաները:

ԱՐՄԵՆԱԿ ԳԱԼԷՆՏԷՐԵԱՆ

Աղեխանդիս, 23 Մարտ 1931

Ս. ՅԱԿՈԲԻ ՆԵՐՍԷՆ

Ս. ԿԻՐԱԿՈՍ ՄԱՆԿԱՆ ՄԱՍԻՆՆԵՐ

Վսեմ. Արմենակ Պէյ Կամսարական Աղեքսանդրի մէջ պատահական վաճառողէ մը գնած ըլլալով Ալլի մը մէջ ամփոփուած մանուկ Ս. Կիրակոսի մասունքը, Եզրպտոսի առաջնորդ Գեր. Տ. Թորգոմ Արքեպի. ի խնդրանաց վրայ, նուիրեց Սրբոց Յակոբեանց Տաճարին:

Տ. Թորգոմ Արքեպս. ի այս տոթիւ Գեր. Պատր. Տեղապահ Սրբազանին ուղղած նամակէն քաղելով կու տանք Ալլին նկարագրութիւնը.

«Ալլին երկարութիւնն է իբր 30 սանդիմ, վերնամասը, այսինքն դաստակին վերի ծայրը ունի 14 սանդիմնոց չըջանակ մը, որ կը վերջաւորուի 17 փերուզ քարերով, ընդհանուրաւ ըստ մասին քիլոյնարի ապարանջանով մը, որ փակցուած է ազուցուած տեղին վրայ. նոյնպիսի ապարանջան մը փակցուած է նաեւ դաստակին վարի մասին վրայ, ընդհանուրաւ՝ միով պակաս 14 նոյնպիսի քարերով: Վերի ապարանջանին ներքեւ, երեք կարգ երկաթագիր տառերով փորագրուած է սույն չափակարանը. ՍԲ. ԱԶՍ ՆՈՐՈԳԵՏԱԻ ԶԵՌԱՄԲ ՄԵԼԷՔԻՍԵԹ ՎԱՐԳԱՊԵՏԻ ՅԻՇԱՏԱԿ ՄՇՈՒ ՍԲ. ՈՎԱՆԷՍԱ ՎԱՆԻՏՆ ՈՐ Է ԲԱԶՈՒԿ ՏՂԱՅ ՄԱՆՈՒԿ ՍԲ. ԿԻՐԱԿՈՍԱ. ԹՎԻՆ ՌՄԳ (=1754) ԱՄԻՆ: Իսկ ամէնէն վարի ծայրը փակուած է գմբէթաձեւ և պտուտակաւոր կափարիչով մը, որուն կեղերունը օղով մը հաստատուած է: Դաստակին վարի կէսին վրայ, ճակատի կողմը, կայ չիլիմ իշի բանուած Ս. Կոյս մը, որ զիրկն ունի Յիսուս Մանուկը, և նստած է երկսիւն խաչածայր խորանի մը ներքեւ: Նիւթն է արծաթ ոսկեջրած, արուեստն է աւսկ կիլիզի: Դաստակին ափի կողմը քիչ մը ճմլուած կ'երևի»:

Գեր. Պատրիարքական Տեղապահ Սրբազանը այս նուիրական ընծայարկութեան առթիւ օրհնութեան և շնորհակալութեան գիր մը ուղղեց Վսեմ. Արմենակ Պէյ Կամսարականի: